ՄԵԾ ՊԱՀՔԻ ՇՐՋԱՆ

Հայ Եկեղեցու ծիսակարգի համաձայն Բուն Բարեկենդանին հաջորդող երկուշաբթիից սկսվում է Մեծ Պահքի շրջանը: Այն տևում է քառասուն օր՝ մինչև Ծաղկազարդի կիրակին, որին հաջորդում է պահոց մի շրջան ևս՝ Ավագ շաբաթը, որի ընթացքում եկեղեցին պատրաստում է հավատացյալ ժողովրդին արժանավորապես և մեծագույն երկյուղածությամբ մոտենալ հաղորդության սեղանին՝ հռչակելով մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Հարության ավետիսը: Պահոց այս շրջանում սահմանափակում է դրվում սննդի որոշ տեսակների վրա, հիմնականում կենդանական ծագում ունեցող, փոխարինելով այն ճաշի այլ տեսակներով՝ ավելի հարուստ ու սննդարար, անանց ու պտղաբերող, որոնք ավետարանական պատգամներն ու առակներն են: Մեծ պահոց շրջանի գրեթե բոլոր կիրակներին, ըստ հայոց տոնացույցի, ավետարանական առակներ են ընթերցվում, որոնք քրիստոնյայի համար զարթուցիչ կոչնակի դեր պիտի կատարեն: Այդ կոչնակը եկեղեցու զանգերի նման հավատացյալներին հրավիրում է արթուն կյանքի: Այս շրջանում է, որ ամեն մեկը պետք է սովորի մեղքից հեռանալ ու մաքրվել, զղջումով ու ապաշխարությամբ՝ իմաստուն կույսերի նման միշտ պատրաստ լինել:

Հին Կտակարանը պատմում է, թե ինչպես Հեսու Նավեի օրոք իսրայելացիները գրավեցին Երիքով հզոր պարսպապատ քաղաքը: Վեց օր բանակը Ուխտի տապանակի ետևից լուռ պտույտ էր կատարելու պարիսպների շուրջը: Հեսուն էր այդպես պատվիրել. «Մի՛ աղաղակեք, թող ոչ ոք չլսի ձեր ձայնը, և ոչ մի խոսք դուրս չգա ձեր բերանից մինչ և այն օրը, երբ ես ինքս ազդարարեմ ձեզ աղաղակել, և ապա կաղաղակեք» (Հեսու Զ 10): Բայց յոթներորդ օրը, լուսաբացին, յոթն անգամ նույն ձևով քաղաքի շուրջը պտտվելով, նրանք

վերջին պտույտի ժամանակ պիտի աղաղակեին, փողեր հնչեցնեին: Այդպես էլ եղավ: Աղաղակից հետո պարիսպները փլվեցին ամեն կողմից և քաղաքը գրավեցին: Այդ խորհրդով է եկեղեցին Պահոց օրերին պատգամում հավատացյալներին «չաղաղակել», այլ «լուռ» մնալ, այսինքն ինքնաքննությամբ, ապաշխարությամբ, մեղքի դեմ պատերազմի ելնելով՝ «պտտվել» երիքովյան պարիսպների շուրջը, որպեսզի Հիսուսի հրաշափառ Հարության ավետիսի՝ «Չէ աստ, այլ յարեաւ» կոչով խորտակվեն մեղքի, փորձությունների պարիսպները:

Լեռան քարոզում Հիսուս պատվիրում է «կատարյալ լինել, ինչպես մեր Երկնավոր Հայրն է կատարյալ» (Մատթ. Ե 48): Պահոց շրջանը այդ առումով նաև կատարելության, ներքին ներդաշնակության տանող մի շրջան է. այն ինչ կորցրեցին մեր նախածնողները Եդեմական պարտեզում, Հիսուսն մեզ ետ վերադարձրեց: Աստծո պատկերն ու նմանությունը այդ կատարելություններն են, որին ձգտելով՝ քրիստոնյան կարող Վերջին փողի հնչելու ժամանակ Պողոս առաքյալի խոսքերով ասել՝ «Այո՛, Տեր, բարի պատերազմը պատերազմեցի, ավարտեցի ընթացքս, պահեցի հավատը: Եվ ինձ հիմա սպասում է արդարության պսակը, որը, որպես հատուցում, ինձ պիտի տա Տերը՝ Արդար Դատավորը, այն օրը. և ոչ միայն ինձ, այլ նաև բոլոր նրանց, որ սիրեցին Նրա հայտնվելը» (Բ Տիմ. Դ 7-8): Այսօր մեզ հետ է Հեսու Նավեից ավելի մեծը՝ Էմանուելը՝ երկնային Հեսուն («Հեսու» նշանակում է *փրկիչ*), Ով ամեն անկատար բան ի զորու է կատարելության վերածել, ինչպես Կանայում, ուր Իր առաջին հրաշքը կատարեց՝ սովորական ջուրը գինու վերածելով: Այդ նույն զորությամբ այսօր էլ Երկնային Հեսուն կարող է մեր միջի անկենդանությունը կյանքի կոչել:

Պահոց շրջանը ամեն մի հավատացյալի համար մեղքի կրակոտ նետերից ազատվելու առիթ է նաև: Ինչպես Ադամը

մեղանչելուց հետո չխոստովանեց և պատուհասից չազատվեց, այնպես էլ ամեն ոք, եթե մեղանչելուց հետո չխոնարհեցնի իր անձը՝ խոստովանելով, մեղքի պատուհասից չի խուսափի: Պահքով և աղոթքով քրիստոնյան ի զորու է չարի փորձություններին դիմանալ և հաղթանակած դուրս գալ:

Պահքի երկու տեսակ

Պահքը երկու կերպ ունի՝ պահք մեղքից և պահք՝ մարմնական կերակուրներից: Կերակուրներից հրաժարվելը միշտ չէ, որ թելադրում է Աստվածաշունչն ու եկեղեցին, բայց պահքի ժամանակ մեղքից հրաժարվելը հրահանգվում է միշտ և ամեն ժամանակ: Աստված սուրբ է, և պահանջում է, որ մարդն էլ սուրբ լինի, այսինքն՝ մեղքից հեռու մնա (Ղևտ. ԺԱ 44): Այս առումով էլ մեղքից ետ կանգնելը օգտակար է անգամ առանց կերակուրից հրաժարվելու, բայց կերակուրից հրաժարվելը՝ առանց մեղքից ետ կանգնելու, անօգուտ է: Ի՞նչ օգուտ եթե մարմինը նիհարի պահքով, իսկ հոգին գիրանա մեղքերով: «Սատանան միշտ պահքի մեջ է, ոչինչ չի ուտում, բայց մեղք գործելուց չի դադարում ու չի հոգնում», - գրում է Տաթևացին և ավելացնում. «Ոմանք պահոց օրերին ոչխարի միս չեն ուտում, բայց մարդու միս են ուտում, որն ավելի ծանր մեղք է»:

Ուրեմն այդ երկուսը միասին պիտի ընթանան, իրար լրացնելով, որպեսզի բազում արդյունք բերեն:

Պահքի օգուտները

Լուսնոտի բժշկության ավետարանական դրվագի մեջ (Մրկ. Թ 13-28) Հիսուսն ասաց, որ «այս տեսակը ուրիշ բանով չի ելնի, եթե ոչ ծոմապահությամբ ու աղոթքով»: Հիսուս հարցրեց նաև հորը, թե ինչքա՞ն ժամանակ է անցել այն օրվանից, ինչ այդ նրան պատահել է: Հայրը պատասխանեց, որ մանուկ հասակից է այդպես եղել: Սա է մեղքի դաժան օրենքը: Ինչքան

հին կամ ինչքան վարժված են մեղքին, այնքան դժվարությամբ են ազատվում դրանից: «Պահքով ու աղոթքով», - ահա անհնարին թվացող մեղքերից ազատվելու բանալին: Մեզ համար սովորական դարձած մեղքերն են վտանգ ներկայացնում, քանի որ դրանց մեջ մնալը հաճախ մարդու համար հաճելի է ու ցանկալի: Բայց ինչքան էլ մեծ ու ահարկու լինի կրակը, այն կդադարի, եթե կտրվի վառելիքի հոսքը: Մարդու սիրտն էլ ցանկություններով պարսպապատված մի ամուր բերդաքաղաք է, բայց պահքով պակասեցնելով բերդի սնուցումը՝ կհաղթենք ու կգրավենք հզոր ու անառիկ թվացող բերդաքաղաքը:

Պահքը դեպի երկինք է առաջնորդում մարդուն: Եղիա մարգարեն Քորեբ լեռան վրա Տիրոջն ընդառաջ ելավ (Գ Թագ. ԺԹ 9-18): Տերն ասաց նրան, որ սաստիկ հողմ, երկրաշարժ, հուր ու կրակ կլինի, որին կհաջորդի մեղմ փչող քամին ու Եղիան միայն մեղմ քամու՝ հանդարտության մեջ կգտնի Տիրոջը: Հողմը հպարտությունն է խորհրդանշում, ուր Աստված չի կարող լինել: Հպարտության հետևանքը անկումն է ու էլ ավելի հեռացումը Աստծուց: Շաժումը, երկրաշարժը ագահությունն է խորհրդանշում, որը միշտ շարժման մեջ է, չի հագենում: Այդտեղ էլ Աստված չի կարող լինել: Հուրը ցանկությունն է, որը այրում է ամեն ինչ իր ճանապարհին կա ու անկենդան վայրի վերածում՝ ամայացնում ու ավերում կապող կամուրջները՝ կտրելով մարդուն Աստծուց: Եվ միայն հանդարտության՝ խոնարհության մեջ Եղիան գտավ Աստծուն ու ուստի միայն խոնարհները Նրան պիտի գտնեն, որովհետև Տերը ամբարտավաններին հակառակ է, իսկ խոնարհներին շնորհ է տալիս (Հակ. Դ 6):

Մեր Տերը իր երկրավոր կյանքում երեք անգամ քաղցեց և երեք անգամ էլ հարմար կերակուր չգտավ: Առաջին անգամ Նրան անապատում քար առաջարկեցին ուտել, երկրորդ անգամ Երուսաղեմ գնալու ճանապարհին Ինքը մոտեցավ

փարթամ տերեևներով թզենուն և այնտեղ պտուղ չգտավ ուտելու և նզովեց թզենուն: Երրորդ դեպքում Նրան քացախ առաջարկեցին՝ որն Ինքը մերժեց Խաչի վրա: Քրիստոս միշտ կարոտ է մարդկանց փրկության, չի ուզում, որ որևէ մեկը կործանվի, այլ ցանկանում է, որ բոլորը փրկվեն՝ դարձի գալով: Նրանք, ովքեր չեն զղջում և մեղքերը չեն խոստովանում՝ քար են բերում մեր Տիրոջը՝ որպես քարեղեն սիրտ ունեցողներ:

Ոմանք էլ միայն տերևներ են բերում Տիրոջը կամ տերևների սոսափյուն՝ ձայն, ուր պտուղ չկա: Սրանք դատարկ խոսքերն են, երբ մենք միայն խոսքով ենք հնազանդվում մեր Տիրոջը ու ոչ թե գործով, կեղծավորի նման ասում ենք ու չենք անում: Այդպիսի կերակուրը նզովում է մեր Տերը, ինչպես թզենուն: Իսկ ոմանք էլ քացախ ու լեղի են բերում Տիրոջը, այսինքն՝ նախանձ, կռիվ, ատելություն, որոնք մերժեց ու չընդունեց մեր Տերը:

Մեծ պահքի կիրակիները

Մեծ պահքն ունի յոթ կիրակի, որոնք ունեն հատուկ ու իմաստալից անուններ՝ *Բուն բարեկենդան*, *Արտաքսման*, *Անառակի*, *Տնտեսի*, *Դատավորի*, *Գալստյան եւ Ծաղկազարդ*: Մեր Եկեղեցու հայրերն այդ կիրակիները վերոնշյալ անուններով են կոչել՝ հիմք ընդունելով աստվածաշնչյան յոթ պատմություն:

Բուն բարեկենդան

Մեծ պահքին նախորդող կիրակին կոչվում է «Բուն բարեկենդան», որովհետև բարեկենդանների մեջ ամենակարևորն է:

«Բարեկենդան» նշանակում է բարի կենդանություն կամ բարի կյանք, աշխարհիկ իմաստով՝ ուրախություն, խրախճանք, իսկ կրոնական իմաստով՝ երանական վիճակ՝ ի հիշատակ դրախտում առաջին մարդկանց երանելի կյանքի:

Արտաքսման կիրակի

Ադամն ու Եվան դրախտում երկար չմնացին և անհնազանդության պատճառով արտաքսվեցին դրախտից: Սակայն մեզ՝ մեղավորներիս համար Քրիստոսով բացվեց փրկության ճանապարհը, և ապաշխարությամբ տրվեց կրկին դրախտային երանությանն արժանանալու հույսը:

Անառակի կիրակի (Ղուկ. ԺԵ 11-32)

«Անառակ որդու» առակը ետ դարձի ճանապարհն է ցույց տալիս: Մեր երկնավոր Հայրը սպասում բոլորին: Հայրը զարմանալիորեն միշտ էլ բարեգութ է ու ողորմածաբար ընդունում է բոլոր զղջացողներին, քանի որ Նա մեղավորի մահը չի ցանկանում, այլ բոլորի փրկությունը:

Տնտեսի կիրակի (Ղուկ. ԺԶ 1-8)

Յուրաքանչյուր մարդ այս աշխարհում Աստծո կողմից նշանակված տնտես է, ուստի պիտի փորձի իմաստնաբար տնօրինել իր տնտեսությունը՝ կյանքը, միտքը, շնորհները, քաջ գիտակցելով, որ մի օր հաշիվ պիտի տա Աստծուն այդ ամենի համար:

Տնտեսի կիրակիից հետո՝ Մեծ Պահքի քսանչորսերորդ օրը, կոչվում է ***Միջինք***: Այդ նշանակում է, որ Մեծ Պահքը հասել է իր կեսին:

Անիրավ դատավորի կիրակի (Ղուկ. ԺԸ1-8)

«Անիրավ դատավորի» կիրակին աղոթքի մեջ հարատևելու խորհուրդն ունի, անձանձրույթ, առանց հուսահատվելու Աստծուն դիմելու՝ վստահ լինելով, որ Նա լսում է և կպատասխանի մեր աղոթքներին, եթե դրանք Իր կամքի համաձայն են: Եթե հիշվող առակի դատավորը, որ անիրավ էր, ստիպված եղավ ականջալուր լինելու և տեղի տալու կնոջ

թախանձանքներին, ուրեմն որքան առավել կլսի մեզ մեր երկնավոր Հայրը՝ մեր երկնավոր Դատավորը, Նա, Ով միշտ իրավացի է, արդար ու հավիտենապես բարի:

Գալստյան կիրակի

Մեծ պահքի վերջին կիրակին կոչվում է Գալստյան, որը հիշեցնում է Փրկչի թե՛ Առաջին և թե՛ Երկրորդ Գալուստները: Առաջինով, այսինքն՝ Աստվածայտնությամբ, մարդուն հնարավորություն տրվեց փրկությանն արժանանալու, քանդվեցին դժոխքի կապանքներն ու բացվեցին դրախտի դռները: Իսկ Երկրորդ Գալստյան հիշատակությամբ վերստին հիշում ենք, որ Քրիստոսը աշխարհի վախճանին «գալու է նույն մարմնով ու Հոր փառքով՝ դատելու ողջերին ու մեռածներին» («Հավատո հանգանակ»):

Ծաղկազարդ

Յոթերորդ կիրակի օրը նշվում է Ծաղկազարդի տոնը, որը հիշատակն է Տիրոջ՝ փառավորապես Երուսաղեմ մուտք գործելու՝ նստած էշի ու նրա քուռակի վրա, երբ ժողովուրդը՝ ծեր թե մանուկ, արմավենու ճյուղեր վերցնելով, գալիս է Տիրոջը դիմավորելու՝ շարունակ օրհնաբանելով Նրան որպես Իսրայելի թագավորի (Մատթ. ԻԱ 1-11, Ղուկ. ժԹ 28-40, Հովհ. ժԲ 12-19):